

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍՈՒՐԽԱԹՅԱՆ

Ա. Գ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

Սովետահայ գրականության ու մշակույթի տաղանդավոր և վաստակաշատ երախտավորներից է Հարություն Սուրխաթյանը (Հարություն Մանուկի Թումանյան. 1882—1938): Նա ծնվել է մայիսի 5-ին (հին տոմարով) Ղրիմի Հին Ղրիմ փոքր քաղաքում: Այս քաղաքն ուներ և մի ուրիշ անուն՝ Սուրխաթ, այստեղից էլ՝ Սուրխաթյան: Հ. Սուրխաթյանի կյանքի ուղին եղել է ծանր, դառնություններով լի: Ինք տարեկան Հարությունը կորցնում է ոհոր, և յոթ հոգուց բաղկացած ընտանիքը մնում է անօգնական վիճակում: Տղան սկսում է աշխատել ծխախոտի պլանտացիայում: «Մենք՝ երեխաներս,—հիշում էր Հարությունը,—շարունակ ուտել էինք ուղում: Մայրս լուսով մեզ պառկեցնում էր քնելու, որ հաց չուզեինք, իսկ ինքը ողջ հիշերը զինվորների համար սպիտակեղեն էր կարում»¹: Սուրխաթյանին, այնուամենայնիվ, հաջողվում է հայրենի քաղաքում ավարտել ծխական դպրոց: 1895 թ. 13-ամյա Հարությունը մեկնում է Մելիտոպոլ և աշխատում խանութում: 23 աստիճան սառնամանիքին նա, տիրոջ հին պիջակը հագին, պատառոտված կոշիկներով, Գիբորի նման, գնորդների է կանչում, իսկ գրպանում՝ Շեչենկոյի «Կոբզարը»: Ձի հաշտվում անտանելի պայմաններին. գնում է Կամենսկոյե և երկու տարի աշխատում մի ուրիշ խանութում: Այստեղ Սուրխաթյանը «ձեռք է բերում» թոքախտ, վերադառնում է տուն և մի փոքր կադդուրվելուց հետո ամբողջովին տրվում է ինքնակրթության: Տեղի բարեգործները ցանկություն են հայտնում նրան սովորելու ուղարկել, սակայն պատանին մերժում է այդ առաջարկությունը, համոզված, որ սեփական ուժերով կհաղթի իր ճանապարհը: Նա մեկնում է Թիֆլիս, իր ազգականի՝ կոմպոզիտոր Կարա-Մուրզայի աջակցությամբ մտնում եկեղեցական երգչախումբ՝ ամսական հինգ ռուբլի աշխատավարձով: Կարգում է, աշխատում, գրում, հանդես է գալիս հոգվածներով և թարգմանություններով: Հիվանդությունը նորից է իրեն զգացնել տալիս: Բժշկի խորհրդով 1900 թ. մեկնում է Աշխաբադ: Այստեղ դասավանդում է տարրական դպրոցում, անդադար կարդում: Տպագրվում է «Աղբյուր», «Մշակ» և այլ պարբերականներում, հայերեն է թարգմանում Կ. Դ. Բալմոնտի, Վ. Ա. Գիլյա-րովսկու և ուրիշների բանաստեղծական երկերը, Լ. Ն. Անդրեևի «Ստույունը», հայ գեղարվեստական գրականությունից նմուշներ թարգմանում ռուսերեն, նրատարակում է գեղարվեստական երկեր՝ Ղրիմի հայերի կյանքից: Հիվանդությունը սաստկանում է, և նա շտապում է Ղրիմ, որի առողջարար օդն օգնում է նրան կադդուրվելու:

¹ Այս և հաջորդ տեղեկությունները բերում ենք ըստ Հ. Սուրխաթյանի այրու՝ Եկատերինա Մարտինովնայի կազմած կենսագրականի (ձեռագիր) և նրա «Հիշողություններ իմ ամուսնու—ընկերոջ՝ Հարություն Մանուկի Թումանյան-Սուրխաթյանի մասին» անտիպ հուշերի:

Սուրխաթյանը լարված ուշադրությամբ հետևում է քաղաքական իրադարձություններին, հեղափոխական շարժմանը, խորանում է մարքսիստական գրականության ուսումնասիրության մեջ, Ղրիմում նա մասնակցում է ընդհատակյա աշխատանքին, 1905 թ. իրադարձություններին, մտնում է սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության շարքերը, նա հեռակա կարգով քննություններ է հանձնում Նոր-Նախիջևանի հոգևոր սեմինարիայում և ստանում միջնակարգ կրթության վկայական: 1907 թ., ամուսնությունից հետո, կնոջ հետ մեկնում է խարկով, ընդունվում համալսարանի իրավաբանական ֆակուլտետ: Այստեղ նա աչքի է ընկնում իր փայլուն ընդունակություններով, սակայն տեղի կլիման վատ է անդրադառնում առողջական վիճակի վրա և, համալսարանը չավարտած, վերադառնում է Ղրիմ: Ոստիկանական հետապնդումները, խուզարկությունները ստիպում են նրան թողնել հայրենի Ղրիմը և հաստատվել Թիֆլիսում: Այստեղ նա դասավանդում է գիմնազիայում, Հովնանյան դպրոցում, թղթակցում է պարբերական մամուլին («Մշակ», «Արոր» և այլն): Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Սուրխաթյանը հակապատերազմական դիրք է ընդունում, աշխատակցում է սոցիալ-դեմոկրատական «Պայքար» թերթին: 1918 թ. օգոստոսին Սուրխաթյանը, որը նախկինում հաշում էր մենշևիկներին, հեռանում է նրանցից և մտնում բոլշևիկյան կուսակցության շարքերը: Նա աշխատակցում է բոլշևիկյան «Պահակ», «Կարմիր աստղ» թերթերին:

2. Սուրխաթյանի ստեղծագործական ուժերի իսկական ծաղկման սկիզբը հանդիսացավ սովետական կարգերի հաստատումը Հայաստանում և Վրաստանում: Նա մտնում է «Կարմիր աստղի», այնուհետև «Մարտակոչի» խմբագրական կոլեգիայի կազմի մեջ, աշխատում է որպես Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Վրաստանում, արտասահմանի հետ կուլտուրական կապի Անդրկովկասյան կոմիտեի նախագահ: Վրաստանի լուսավորության կոմիսարիատի կողմից Սուրխաթյանը լիազորվում է վերահսկելու հայկական նոր ուղղագրության անխախտ կիրառմանը Վրաստանի դպրոցներում և տեխնիկումներում: Նրան է հանձնարարվում նաև հայերեն ավանդվող գրական և պատմական առարկաների դասավանդության վերստուգումը: Սուրխաթյանը մասնակցում է մշակութային, հասարակական բաղմազան միջոցառումների, հանդես է գալիս զեկուցումներով, «Խորհրդային Հայաստան», «Նոր աշխարհ», «Նոր ուղի» և այլ պարբերականներում գրում է գրականության խնդիրների, նաև քաղաքական հարցերի շուրջ, անդրադառնում է արտասահմանյան հայ գաղութների կյանքին, մամուլին, գրողներին: Հրապարակ է հանում գրքեր, որոնք ներթափանցված են մի հիմնական ցանկությամբ՝ օժանդակել նոր հասարակության հոգևոր հարստությունների ստեղծմանը:

* * *

Հարություն Սուրխաթյանի գրական առաջին փորձերն արդեն գրսևորում են նրա հետաքրքրությունների հասարակական, սոցիալական ուղղվածությունը: Ուշագրավ է «Մեկրոն աղային սթոռիան» (1903), «Մեկրոն աղային վերջաբանությունը» (1904) գեղարվեստական երկը, որը Ռ. Պատկանյանի ցասկոտ երգիծանքի ոգով մերկացնում է պորտաբուլծներին: Երկի մի ամբողջ մաս էլ վերնագրել է «Անդիի աշխարհը (ըստ Գ. Սունդուկյանի)», որտեղ

Մեկըն աղան Սունդուկյանի հերոսի՝ Օսկան Պետրովիչի նման ընկնում է դժոխք։ Սուրխաթյանի ձիրքը, սակայն, դրսևորման ավելի հարմար ասպարեզ է գտնում գրականագիտության մեջ և 1908 թ., շուրջ երեք տասնամյակ, նա աշխատում է այս բնագավառում։

1911 թ. հայերեն լույս է տեսնում Լ. Ն. Տոլստոյի «Խոստովանությունը» Սուրխաթյանի թարգմանությամբ և առաջաբանով։ Առաջաբանում հեղինակը խոսում է դարերի ընթացքում տիրապետող դարձած սոցիալական անարդարության, այդ անարդարությունը արդարացնող «կեղծության ու փարիսեցիության ծնունդ գաղափարների» մասին²։ Նա պահանջում է վերջ տալ այս հակաբնական երևույթին, սոցիալական անարդարությանը և կառուցել աշխարհ, որտեղ իշխի արդարությունը, մարդկանց երջանկությունը։

Այս առողջ ու ճշմարիտ հայեցակետը կյանքի, մարդկային փոխհարաբերությունների նկատմամբ հանդիսացավ Սուրխաթյանի գրականագիտական գործունեության գաղափարական անկյունաքարը։ Լ. Ն. Տոլստոյի ստեղծագործությունն էլ նա բնորոշեց՝ ելնելով այս հիմնորոշող սկզբունքից։ Տոլստոյին նա համարում է «ռուսական դեմոսի, գլխավորապես գյուղացիական հուժկու տարրի» ոգու արտահայտիչ։ Հենց դրանում էլ նա տեսնում է մեծ գրողի ստեղծագործության ուժեղ ու թույլ կողմերը և հատկապես ընդգծում նրա «վարդապետության հիմնական գաղափարների», «սոցիալական արդարության ջերմագին քարոզի», «ճշմարտության անրնդհատ որոնումի», «մաքուր և անկեղծ եղբայրասիրության, հավասարության դավանանքների» մեծ նշանակությունը³։

* * *

Հայաստանում և Վրաստանում սովետական կարգերի հաստատման առաջին օրերից Սուրխաթյանը ձեռնարկում է գրականության դասագրքեր կազմելու դժվար, պատասխանատու գործին։

1922 թ. Թիֆլիսում նա հրատարակում է «Հին հունական գրականություն» գիրքը։ Այս ձեռնարկը, որ հեղինակի լարված աշխատանքի արգասիք էր, հարկավոր և մեծ օգնություն էր աշակերտությանը, ուսանողությանը և առհասարակ աշխատավորական զանգվածներին։ Դրքի լույս աշխարհ գալը միաժամանակ ակնառու պատասխան էր գրական «նորարարներին», որոնք հրաժարվում էին անցյալի ժառանգությունից։ Այն վկայում էր, որ նոր հասարակության համար անցյալի գեղարվեստական արժեքները հանդիսանում են էսթետիկական հաճույքի, կյանքի ճանաչողության աղբյուր և առանց նախորդների փորձի օգտագործման անհնար է նոր մշակույթի ու արվեստի ստեղծումը։ Գիրքը դրսևորում էր և հեղինակի ձգտումը՝ վերլուծել մարդկության գեղարվեստական մտքի զարգացման պատմությունը հաղթանակած աշխատավորի աշխարհայացքի լույսով։ Հեղինակը պարզ, մատչելի պատմում է և աստիճանաբար բացում ընթերցողների առջև հին հույների, նրանց հոգևոր կյանքի աշխարհը։ Ժամանակակից մարդը հույն գրողների երկերում տեսնում է այնպիսի դրամաներ, ապրումներ, որոնք նրան հասկանալի են և այսօր։ Հ. Սուրխաթյանը համաձայն չէ բուրժուական գրականագիտության մեջ տա-

² Լ. Ն. Տոլստոյ, Խոստովանություն, Առաջաբան, Թիֆլիս, 1911, էջ 5—6։

³ Նույն տեղում, էջ 18։

րածված կարծիքին, թե հին հունների կյանքը անդորր է ու խաղաղ, հեռու գրգռվածություններից, սոցիալական ընդհարումներից, թե նրանք պատկերացում չունենին տառապանքի, հակասություններով լի հոգեկան պայքարի մասին: Նա կոնկրետ օրինակներով, հատկապես Հոմերոսի պոեմի Թերսիդեսի կերպարի բնութագրումով ցույց է տալիս նման պնդումների անհիմն լինելը:

Ձեռք կարող չնշել, որ երբեմն որոշ գրողների ստեղծագործությունների բնութագրումներում և զնահատականներում նկատվում է դեհիկ սոցիոլոգիզմի երանդ: Սակայն դեղարվեստական փաստի ստեղծագործական վերլուծությունը և թե ոչ մինչև վերջ, բայց և այնպես նշանակալիորեն նվազեցնում էր դեհիկ սոցիոլոգիզմի հետքերը նրա ուսումնասիրություններում: Ընտրողը տեղյակ դեպքում գրական երևույթների նկատմամբ ստեղծագործական մոտեցումն է, որը և պայմանավորում է Հ. Սուրխաթյանի աշխատություններից շատերի, տվյալ դեպքում՝ նրա «Հին հունական գրականության» արժեքը:

Նույն 1922 թ. լույս է տեսնում գրականագետի մյուս գիրքը՝ «Դրական գոհարներ»: Նա նպատակ է դնում ընթերցողին ներկայացնել հայ գրականության լավագույն նմուշները հնագույն ժամանակներից մինչև 1920-ական թթ., նաև համաշխարհային գրականության առանձին գոհարներ: «Նյութերի ընտրությունն անելիս նկատի եմ ունեցել նրանց դեղարվեստական, ուրեմն և սոցիալական արժեքը»,— գրում է Սուրխաթյանը գրքի առաջաբանում: Նա տալիս է ներկայացվող գրողների ստեղծագործության հակիրճ բնութագիրը, նաև գրական սեռերի, տեսակների բնորոշումը: Աշխատությունն արժանանում է գրվածքների խոսքի «Նոր աշխարհ» և «Դարբնոց» հանդեսներում: Գարեգին Մելոյանը «Նոր աշխարհում» (1922, № 1) գրում է, որ «Սուրխաթյանի այդ աշխատությունը մեր պետական միջնակարգ դպրոցներում և գրականության մեջ զբաղվողների սեղանին ամենապատվավոր տեղը պիտի զբաղակ»: «Դարբնոցի» (1922, № 2—5) գրախոսը (Ար-դի) գրքի լույս տեսնելը համարում է «մի խոշոր երևույթ մեր գրականության համար, իբրև մի կուլտուրական գործ, որի նմանը մինչև օրս դեռ չենք ունեցել... Իր մի շարք առավելություններով նա երևան է գալիս որպես նոր ուղի և լայն հորիզոններ ստեղծող մի գործոն»: Իհարկե, քրեստոմատիայում կան թերություններ և չէին կարող չլինել, քանի որ իր տեսակում այն առաջին աշխատությունն էր մեղանում: Սակայն դա անհրաժեշտ գիրք էր, ընթերցանության և գրական կրթության լայն ծրագիր էր առաջադրում, հիմք էր դնում նոր ձեռնարկներ ստեղծելու կարևոր գործին:

1926 թ. անխոնջ գործիչը հրապարակ է հանում նոր աշխատություն՝ երկհատոր «Հայ գրականություն»⁴: Գիրքը նախատեսված էր բանվորական ֆակուլտետների, տեխնիկումների ուսանողների և միջնակարգ դպրոցների բարձր դասարանների աշակերտների համար: Ձեռնարկը ներկայացնում է XIX դարի և XX դարի առաջին քառորդի հայ գրողների շափածո և արձակ ստեղծագործություններից բաղմամբիվ նմուշներ: Տերստերին կցված են գրողների համառոտ կենսագրականները և ստեղծագործության հակիրճ բնութագիրը: Այս հրատարակության մեջ հեղինակը չէր մտցրել արևմտահայ գրողներին: Նա

⁴ Հ. Սուրխաթյան, Գրական գոհարներ, հատ. 1, Թիֆլիս, 1922, էջ 3:

⁵ Հ. Սուրխաթյան, Հայ գրականություն, հատ. 1, 2, Երևան, 1926:

մտադիր էր նրանց հատկացնել առանձին հատոր: Մամուլն աշխատության մասին լավ կարծիք է հայտնում⁶:

1929 թ. լույս է տեսնում գրականագետի «Հետհոկտեմբերյան հայ գրականություն» աշխատությունը: Հեղինակը, հետևելով 20-ական թթ. գրականության՝ այն ժամանակ ընդունված բաժանմանը՝ պրոլետարական և ուղեկիցների գրականության, այս գրքում ներկայացնում է «պրոլետարական գրականությունը», խոստանալով մոտ ապագայում հրապարակ հանել մի ուրիշ գիրք ուղեկիցների մասին:

Շատ տեսակետներից ուշագրավ այս աշխատությունը, որն ընդգրկում է Ե. Զարենցի, Ա. Բակունցի և մյուսների ստեղծագործության վերլուծությունը, ուրվագծում նոր գրականության զարգացման ուղիները, հանդիսացավ սովետահայ գրականության պատմության առաջին լուրջ փորձը: Սուրխաթյանի գիրքը սոսկ պատմություն չէ, այլ ներգործուն ու արգասավոր միջամտություն գրական կյանքին, զգացվում է հեղինակի կրքոտ շահագրգռվածությունը աշխատավորների հաղթանակած սերնդի համար հոգևոր հարստություններ ստեղծելու ուղղությամբ: Բալաման և և կարևոր գրքում արծարծված հարցերը: Հեղինակը ակնառու փաստերով, իր իսկ գրքի հրապարակումով ցույց է տալիս նոր գրականության գոյությունը ժխտողների ջանքերի ապարդյուն լինելը, միաժամանակ ընդգծում է, որ իսկական ստեղծագործողների կուլքին կան մարդիկ, որոնք ճշնում են «բանաձևերի հեղեղով» նվաճել ասպարեզը և կարգադրություններով ու որոշումներով զարգացնել նոր արվեստն ու գրականությունը: Նա առանձնահատուկ ուշադրություն է դարձնում գրական վարպետության հարցերին: Գրականությունը համարելով կյանքի զեղարվեստական արտահայտություն և գաղափարական, հասարակական պայքարի ղեկը, Հ. Սուրխաթյանը գրական երևույթը ուսումնասիրում է կապված կյանքի հետ և անում հասարակական-քաղաքական լայն ընդհանրացումներ: Նա ձգտում է օգնել գրողների ստեղծագործական աճին և նպաստել ժողովրդին գրականությունը հաղորդակից դարձնելու ազնիվ գործին: Ահա սա է գրքի պաթոսը և սա է պայմանավորում նրա պատմագրական նշանակությունը: Մի տարի անց, 1930 թ., Սուրխաթյանի գիրքը, որոշ փոփոխություններով ու կրճատումներով, լույս է տեսնում ռուսերեն՝ մեր երկրի մյուս ժողովուրդներին հաղորդակից դարձնելով ժամանակակից հայ գրական պրոցեսին:

1935 թ. Հայաստանի պետական հրատարակչությունը լույս է ընծայում Սուրխաթյանի «Հոմերոս. Շեքսպիր» աշխատությունը: Գիրքը կազմված է երկու մասից. առաջինը նվիրված է հին հունական գրականությանը, մասնավորապես Հոմերոսին, իսկ երկրորդը՝ Շեքսպիրին: Այս ընդհանուր ակնարկում անհնար է խոսել գրքում վերլուծվող խնդիրների մասին: Միայն նշենք, որ Սուրխաթյանն իր գրքով մեկ տանում է Հոմերոսի և Շեքսպիրի սքանչելի աշխարհը, հատկապես շեքսպիրյան զեղարվեստական աշխարհը, որն այնքան մոտ է հայ ընթերցողին:

Հիշատակենք նաև գրականագետի երկու հանգամանալից առաջաբանները, կցված Լ. Տոլստոյի «Աննա Կարենինա» (Երևան, 1936) և Ֆ. Դոստոևսկու «Նրկերի ժողովածու» (հատ. 1, Երևան, 1934) գրքերին, որոնցում նա տալիս

⁶ «Մարտակոչ», 1926, 15.VIII, 1927, 16.I:

է համաշխարհային գրականության երկու հսկաների ստեղծագործության վերլուծությունը:

Դոստոևսկուն նվիրված աշխատության մեջ հայ գրականագետը պատշաճն է հատուցում մեծ գրողի հանճարին, ընդգծում է, որ նրա ստեղծագործությունը այսօրվա համար էլ հսկայական գեղագիտական հետաքրքրություն է ներկայացնում: Սուրխաթյանն իր առջև խնդիր է դնում՝ որոշել Դոստոևսկու ստեղծագործության հասարակական, գեղագիտական էությունը մարքս-լենինյան էսթետիկայի սկզբունքների լույսով: Նա չի շրջանցում սուր բանավեճերի առարկա դարձած խնդիրները: Արժարժում է նաև հարցեր, որոնք նախահետեմբերյան գրականագիտության կողմից անտեսվում էին՝ Դոստոևսկու կապերը Օգարյովի հետ, մասնակցությունը Ազատության և խաղաղության լիգայի միջազգային կոնգրեսին Շվեյցարիայում և այլն:

Սուրխաթյանը մեծ գրողի կյանքի մասին պատմում է կենդանի, հետաքրքիր, չի սահում փաստերի մակերեսով, բացահայտում է նրանց բովանդակությունը, մեզ տանում գրողի լարված, բարդ հոգևոր կյանքի ոլորտները: Եվ նրա կյանքի փաստերը ներկայանում են լիարյուն, մարմին առած, տեսանելի տիպական հանգամանքների լայն ֆոնի վրա:

Հակիրճ և խորն է բնութագրում նա գրողի հիմնական ստեղծագործությունները, և քայլ առ քայլ, աստիճանաբար մեր առջև բացվում է Դոստոևսկու յուրատեսակ աշխարհը: Այդ աշխարհի մեկնաբանման պրոցեսում դրսևորվում են նաև գրողի ստեղծագործության հակասությունները, ուժեղ և թույլ կողմերը: Սուրխաթյանը վերլուծության մեջ ուշադրությունը գլխավորապես բեռնում է գրողի երկերի գաղափարական բովանդակության վրա, սակայն դա գեհհիկ սոցիոլոգիական վերլուծություն չէ, այլ իսկապես սոցիոլոգիական վերլուծություն, որի մեջ գաղափարականը անբաժան է գեղարվեստականից:

«Աննա Կարենինայի» հայերեն հրատարակությանը կցած Սուրխաթյանի առաջաբանը մեծ գրողի ստեղծագործության հանգամանալից ուսումնասիրություն է: Առաջին գլխում («Լենինը Տոլստոյի մասին») գրականագետը անդրադառնում է Տոլստոյի լենինյան մեկնաբանմանը: Այս գլխում մեր ուշադրությունը չի կարող չգրավել այն մասը, որտեղ Սուրխաթյանը հաստատում է գրողի աշխարհայացքի և մեթոդի «հակասության» մասին «տեսության» հակագիտական էությունը: Անշուշտ, նշանակալից է, որ դեռ 1930-ական թթ., երբ գրողի աշխարհայացքի և մեթոդի հարաբերակցության հարցում շատերը շփոթ էին ստեղծել, հայ գրականագետը հանդես է գալիս միանգամայն ճիշտ մեկնաբանությամբ:

Հաջորդ գլուխներում նա քննում է Լ. Ն. Տոլստոյի կյանքը և ստեղծագործությունը, հատկապես «Աննա Կարենինան»: Տոլստոյի՝ ժամանակի համար տիպական դրվագներով, ներքին խոր բեկումներով հարուստ կենսագրության շարադրման, ստեղծագործության վերլուծության ընթացքում Սուրխաթյանը քննում է դարաշրջանի արտացոլումը նրա կյանքում և ստեղծագործության մեջ: «Աննա Կարենինայի» վերլուծությունը, կերպարների, պատկերային համակարգի քննումը գրականագետին համոզում է, որ այդ երկը դարաշրջանի կենդանի թանձրուկ է, իր հասարակական նշանակությամբ, գեղարվեստական կատարելությամբ, գեղարվեստական հարստություններով՝ համաշխարհային գրականության գլուխգործոցներից մեկը:

Լ. Տոլստոյին Սուրխաթյանը անդրադառնում է նաև «Լենինը և գրականագիտությունը» հոդվածում («Բարձունքներ», 1934, № 1—2, 3): Նա Լենինի հոգվածներում և ասույթներում հատկապես ընդգծում է բոլշևիկյան գործունե և արդասավոր միջամտությունը գեղարվեստական կյանքին, գրական երեվույթների լուսաբանությունը հեղափոխության խնդիրների տեսանկյունից: Քննելով Լենինյան գրականագիտական ժառանգության մեջ արժարժված խընդիրները, Սուրխաթյանը ընդգծում է նաև Լենինի այն միտքը, որ աշխատավորները մեծ արվեստի իրավունք են նվաճել, և խոսում է բարձր գաղափարական-գեղարվեստական մակարդակի նոր գրականություն ստեղծելու մասին: Բացի նշված տպագիր աշխատություններից, ինչպես վկայում է Սուրխաթյանի այրին, գրականագետը 1937 թ. ավարտել է գրականության ձեռնարկ՝ բուհերի և տեխնիկումների համար և ուսումնասիրություն «Սասունցի Դավիթ» մասին, որոնց ձեռագրերը կորած են:

Լայն են Սուրխաթյանի գրականագիտական հետաքրքրությունները: Այդ հետաքրքրությունների ոլորտում են հայ գրականությունը հնագույն ժամանակներից մինչև 1930-ական թթ., հին հունական գրականությունը և արտասահմանյան գրականության խոշորագույն վարպետներ Շեքսպիրն ու Սերվանտեսը, Մոլիերն ու Գյոթեն, Հ. Իրսենն ու Ջեյ Լոնդոնը, Բ. Մինկլերը, ռուս գրողներ և մտածողներ Բեկինսկին ու Գերցենը, Դոբրոլյուբովը, Տոլստոյն ու Դոստոևսկին, Ալ. Բլոկը, Մ. Գորկին և ուրիշներ: Եվ կարևորն այն է, որ իր այս հետաքրքրությունները նա դարձնում է հայ գրականագիտական մտքի հետազոտության առարկա, նրանցով վարակում հայ ժամանակակից ընթերցողին:

* * *

Հ. Սուրխաթյանը համոզված էր, որ նոր գրականությունը՝ անցյալի գեղարվեստական գոհարների ժառանգորդը, պետք է հանդիսանա մարդու գեղարվեստական մտքի, նրա հոգևոր կյանքի պատմության բարձրագույն փուլը: Եվ նա համարձակ ու սկզբունքային պայքարի մեջ է մտնում նոր մշակույթի, արվեստի ու գրականության համար: Նա մարտնչում է նոր գրականության բարձր գեղարվեստական մակարդակի համար, երբեմն շատ խիստ ու սուր է արտահայտվում իր ժամանակակից գրողների աշխատանքի մասին, բայց և ամեն կերպ աշխատում է նրանց բոլոր պոտենցիալ կարողությունները զբոսեցնել, «գուրս բաշել», դարձնել ժողովրդի սեփականություն: Սուրխաթյանը այն գրականագետներից է, որոնք իրենց գրական լայն մտահորիզոնը, մեծ խորագիտությունը չեն սահմանափակում առանձնասեյակի՝ նեղ շրջանակներում, որոնք գնում են դեպի ժողովուրդը, իրենց ամբարած գիտությունը նրան տալու համար, որոնք ոչ միայն գիտնական են, այլև դորժիչ:

Սուրխաթյանի քննադատական գործունեությունը բնութագրվում է առաջին հերթին մի հիմնական սկզբունքով՝ ուշադիր, լրջմիտ վերաբերմունքը հին արժեքների նկատմամբ զուգակցել նոր արվեստը զարգացնելու խնդիրներին: Այն ժամանակ, երբ «նորարարները» հայտարարում էին, թե Շեքսպիրները մեղ հարկավոր չեն, «ազգային պոլիետարական գրականության մասին խոսել, դա արդեն ետադիմական քայլ է»⁷, Սուրխաթյանը, ինչպես տեսանք,

⁷ «Մարտակոչ», 1924, 19-XX.

հանդես է գալիս անցյալի վարպետներին և սովետական հայ գրականությանը նվիրված աշխատություններով:

Սուրխաթյանը սովետական գրականագիտության մեջ առաջիններից է, որ հիմք է դնում Չարենցի ստեղծագործության գիտական ուսումնասիրությանը, նրա պոեզիային տալիս է առողջ, խորաթափանց ու հեռուն տեսնող գնահատական, այն քննելով հայ գրական պրոցեսի շղթայում, սովետահայ գրականության զարգացման լույսի տակ: Ե. Չարենցը, լինելով «բնական շարունակությունը Տերյանի», ստեղծում է «իր ինքնուրույն պոեզիան», հարթում նոր ուղիներ: «...Հայ գրականության պատմության մի նոր էտապը, նոր օղակն է կազմում Չարենցը Տերյանից հետո»: Այդ օղակը «պրոլետարական մեծ հեղափոխության երգչի» օղակն է⁸: Նման մեկնաբանությունը ըստ էության ուղղված էր «նորարարների» «անհիշտ կուրսի» դեմ: Սուրխաթյանը գրականության զարգացման նոր փուլը չի կտրում գրական պրոցեսից, դրսից չի փաթաթում գրականության պատմությանը, այն քննում է որպես նախորդ գրականության բնական շարունակություն, ընդգծելով նրա նոր որակը:

1921 թ. «Կարմիր աստղում» (8, 11. V) տպագրած իր «Եղիշե Չարենցի քնարերգությունը» հոդվածում Սուրխաթյանը գրել է. «Եթե Տերյանը իր երազած կյանքի կարոտն առավ հեղափոխության ալիքների մեջ նետվելով, ապա Չարենցը դարձավ այդ ալեկոծումների ոգևորիչ երգիչը»:

Ե. Չարենցի սայթաքումներն էլ Սուրխաթյանին երբեք չեն շեղում նրա՝ բանաստեղծի նկատմամբ ունեցած վերաբերմունքից: «Երեքի» դեկլարացիայի, «Պոեզոգուռնայի», «Ռոմանս անսերի» մասին Սուրխաթյանի խոսքը «Հետհոկտեմբերյան հայ գրականության» մեջ բացարձակ դատապարտում, պարսավում չէ: Նա աշխատում է վերլուծել գրական այդ երևույթները, վեր հանել նրանց երևան գալու պատճառները, օգնել Չարենցին խորանալու կատարվող պատմական իրադարձությունների գեղարվեստական հետազոտության մեջ, մարմնավորելու սոցիալիստական հեղափոխության մեծ դարաշրջանը: Նա համոզված է, որ Չարենցը կոչված է այդ վսեմ նպատակի համար:

Խոսելով ժամանակակից գրական շարժման և «Մուրճի»՝ «այդ շարժման արտահայտություններից մեկի» մասին, Սուրխաթյանն ընդգծում է, որ «Մուրճի» գրողների «վրա տիրապետողը Չարենցի պոեզիայի հիմնական գիծն է թե՛ ըստ ձևի և թե՛ ըստ բովանդակության», Չարենցն է, որովհետև նա «ժամանակի թանձրացած արսնահայտիչն» է⁹: Սուրխաթյանը միաժամանակ կարծում է, որ «Չարենցը ոչ անսխալական է, ոչ էլ բացարձակորեն ազատ երբումից, որով հարուստ են մեր օրերի բոլոր բանաստեղծները՝ մեր շրջանին հատուկ շատ հասկանալի պատճառներով: Մակայն անհերքելի է, որ նրա երբեմն երևացող «պակասությունները» ծածկվում են տաղանդով... նոսրանում ստեղծագործական կրակով»¹⁰: Անհերքելի է, որ «նրա հորիզոնը համաշխարհն է, մոտիվները միջազգային»՝ բեկված բանաստեղծի մեջ «խորհրդային հայ միջավայրի պրիզմայով»¹¹: Չարենցը դեռ երիտասարդ է, նրա տաղանդը լի է կարելիություններով: Իր կոչման գիտակցությունը ճիշտ է ըմբռնել: Պոետ է,

⁸ Տե՛ս Է. Սուրխաթյանի հոդվածները Ե. Չարենցի մասին՝ «Կարմիր աստղ», 1921, 8, 11. V: «Դարբնոց», 1922, № 1: «Նոր աշխարհ», 1922, № 2:

⁹ «Մարտակոչ», 1923, 6. V:

¹⁰ Նույն տեղում, 1924, 3. I:

¹¹ Նույն տեղում, 29. XI:

Վոմունիստ պոետ: Անընդհատ որոնումների մեջ է, եղածով և արտադրածով չի բավականանում, գտած ձևի վրա կանգ չի առնում: Եվ ահա—որոնումների արգասիքը—նոր պոեմներ («Լենինն ու Ալին», «Ստամբուլ»), հեղափոխական արվեստի նվաճումներ, որոնց հակիրճ ու թանձր, խտացած բնութագիրն է տալիս Սուրխաթյանը¹²:

Սուրխաթյանը ավյուրով ու կրքով է պայքարել երիտասարդ սովետահայ դրականության համար, պաշտպանել նրա տաղանդավոր ու շնորհալի ներկայացուցիչներին անտեղի հարձակումներից ու նրանց արածի աղավաղումներից: Այն ժամանակ, երբ գոհհիկ սոցիոլոգները «բոհեմիստ» Ջարենցի վրա քարդում էին անասելի մեղադրանքներ՝ «գրական սեթևեթանք», կտրվածություն «դասակարգային իրականությունից», «անմարմին ու անոսկր արքայազնի» և այլն, Հ. Սուրխաթյանը և մյուս մարքսիստ գրականագետները դրսևորում էին առողջ վերաբերմունք հեղափոխության բանաստեղծի նկատմամբ՝ նրա որոնումների, մեծ ստեղծագործական ճանապարհին:

Սուրխաթյանը առաջիններից է, որ նշել է Դ. Դեմիրճյանի «Քաջ Նազարի» արժանիքները: «Նորք» ամսագրի 1923 թ. № 3-ին նվիրված գրախոսականում նա, անդրադառնալով «Քաջ Նազարից» հանդեսում տպագրված հատվածներին, գրում է. «Դրվածքը լի է ժողովրդական սրամիտ դարձվածքներով, հումորով: Գործողների դեմքերը գծված են հմուտ վարպետի ձեռքով: Մանավանդ Նազարի և կնոջ: ...Գրվածքի լեզուն՝ պատկերավոր, պարզ, հատուկ: Դարձվածքները՝ կարճ և արտահայտիչ»¹³: Իհարկե, նման գնահատականը չէր կարող դուր գալ գոհհիկ սոցիոլոգներին, որոնք, օրինակ, Գ. Հայկունու գլխավորությամբ, բանաձև են կազմում. «Դեմիրճյանի «Քաջ Նազար» պիեսը որպես ժողովրդական հեքիաթի գեղարվեստական մշակում, միանգամայն թույլ է և նույնիսկ բուն հեքիաթն էլ խեղաթյուրված, հեռու ժամանակակից ոգուց և բնույթից, ուստի պետք է վտարել այն բեմական ասպարեզից»¹⁴:

Սուրխաթյանը, իհարկե, անսխալական չէր: Մական էականում, հիմնականում, սկզբունքային հարցերում նա ճիշտ էր, հետևողականորեն մարտնչում էր երիտասարդ խորհրդային դրականության գաղափարական-գեղարվեստական բարձր մակարդակի համար:

Հարություն Սուրխաթյանը սովետահայ մշակույթի անխոնջ շինարարներից էր: Նա շարունակ գտնվում էր գրական բուռն պրոցեսի մեջ, իր գրավոր ու բանավոր ելույթներում ընդգրկում էր ժամանակի համարյա բոլոր մեծ ու փոքր գրողներին, ձգտում էր իր խոսքով, վերլուծական-հետազոտական աշխատանքով բնորոշել նրանց տեղն ու դերը գրական շարժման մեջ: Ականավոր գրականագետի արժեքավոր աշխատությունների ու հոդվածների մեծ մասը այսօր էլ պահպանում է ոչ միայն ճանաչողական, պատմական, այլև ալթ-մեական նշանակություն և զգում է խոր ու մանրակրկիտ ուսումնասիրության կարիք:

¹² Նույն տեղում, 1925, 13.II: Տե՛ս նաև «Խմբապետ Շավարշի» մասին՝ «Պրոլետար», 1929, 31.III:

¹³ «Մարտակոչ», 1923, 2.XI:

¹⁴ Նույն տեղում, 1924, 16.V: